ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի եղբայրական հրավերով սույն թվականի սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ ժամանեց վրաց ուղղափառ քույր եկեղեցու նորընտիր Հովվապետ Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը:

Նորին Սրբությանը ուղեկցում էին բարձրաստիճան հոգևորականներ՝ Սուխումիի և Աբխազիայի Իլիա սրբազան միտրոպոլիտը, Թելավիի միտրոպոլիտ, Թբիլիսիի Ալեքսանդր Նևսկի տաճարի ավագերեց Զինովի սրբազանը և Ցիլկանիի Գայոս սրբազան եպիսկոպոսը:

Համայն Վրաց կաթողիկոսին Թբիլիսիից ուղեկցում էին նաև Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և վրահայոց թեմի առաջնորդական տեղապահ տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը:

Սեպտեմբերի 29-ին, ժամը 15-ին, Երևանի օդանավակայանում հարգարժան հյուրերին ողջունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսներով, վարդապետներով և ղեկավար պաշտոնեությամբ:

Բարձրաստիճան հյուրերին օդանավակայանում դիմավորեց և բարի գալուստ մաղթեց ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար Սարգիս Գասպարյանը:

Երկու Հովվապետները հանդիսավոր շքերթով ժամանեցին Մայր Աթոռ սուրբ Էջմիածին և Իջման սուրբ սեղանի առաջ աղոթելուց հետո փոխանակեցին ողջույնի խոսքեր:

Սեպտեմբերի 30-ին, ժամը 18-ին, երկու Հայրապետները Մայր տաճարում նախագահեցին երեկոյան ժամերգությանը և միատեղ աղոթեցին էկումենիկ ոգով աշխարհի խաղաղության համար: Ապա բարձրաստիճան հյուրերը ներկա եղան հոգևոր ճեմարանի հանդիսասրահում իրենց պատվին կազմակերպված ուսանողական հանդեսին:

Հոկտեմբերի 1-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձի առթիվ մատուցված հայրապետական սուրբ պատարագին ներկա եղան Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը և Իր շքախմբի անդամները:

Քարոզի ընթացքում Հայոց Հայրապետը, Մայր տաճարում հավաքված հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ, ողջունեց թանկագին հյուրերին՝ ոգեկոչելով վրաց և հայոց քույր եկեղեցիների և երկու հարևան եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Հավարտ սուրբ պատարագի Վեհարանի գահասրահում տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության 17-րդ տարեդարձի առիթով, ուր ջերմ ողերձներով Վեհափառ Հայրապետին շնորհավորեցին՝ Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը, տ. Թորգոմ արքեպիսկոպոսը և տ. Հուսիկ եպիսկոպոսը: Շնորհավորանքի և գնահատանքի խոսքով հանդես եկավ նաև տիար Սարգիս Գասպարյանը:

Վերջում շնորհակալության և օրհնության խոսք ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

Հանդիսության ավարտին երկու Հովվապետների միջև փոխանակվեցին հուշանվերներ:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, ջերմ մթնոլորտում:

Հոկտեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, ժամը 12-ին, երկու Հայրապետները Իրենց շքախմբերով պաշտոնական այցելություն տվեցին ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ մեծարգո տիար Բադալ Մուրադյանին, ուր ներկա էր նաև տիար Ս. Գասպարյանը:

Երկու Հովվապետների և Մինիստրների սովետի մեծարգո նախագահի միջև տեղի ունեցավ բարեկամական զրույց, ջերմ մթնոլորտում:

Հայաստանում եղած օրերին բարձրաստիճան հյուրերը այցելեցին ս. Գեղարդա վանք, Օշականի ս. Մեսրոպ եկեղեցի և ս. Հռիփսիմե տաճար: Հյուրերը այցելեցին նաև Եղեռնի հուշարձան, ուր ծաղիկներ դրեցին:

Հոկտեմբերի 3-ին, ժամը 14-ին, վրաց ուղղափառ եկեղեցու Հայրապետ Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը Իր շքախմբով հրաժեշտ առավ Հայոց Հայրապետից և մեկնեց Թբիլիսի:

Հարգարժան հյուրերին Երևանի օդանավակայանում ճանապարհեց Հայոց Հայրապետը՝ ի գլուխ Մայր Աթոռի միաբանության:

Վրաց ուղղափառ քույր եկեղեցու Հովվապետ Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսի սույն բարեկամական այցելությունը Մայր Աթոռ հանդիսացավ երջանիկ պատմական մի առիթ ևս՝ առավել ամրապնդելու հայոց և վրաց երկու եկեղեցիների բազմադարյան բարեկամությունը, ավետարանական և էկումենիկ ոգով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

8-ը հոկտեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին